№ 12 ՅՈՒՆՎԱՐԻ 31 (ՓԵՏՐՎԱՐԻ 12) 1878 ՅՈՒՆՎԱՐԻ 31 (ՓԵՏՐՎԱՐԻ 12) № 12

ԵՕԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 ռուբլ, կէս տարվանը 6 ռուբլ։

Թիֆլիսում գրվում են խմբագրատանը և պ. Ծատուրեանի խանութում

Օտարաքաղաքացիք դիմում են ուղղակի Тифлисъ. Редакція „Мшакъ"

ՄՇԱԿ

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ (Բացի կիրակի և տօն օրերից)։

Յայտարարութիւնները ընդունվում են ամեն լեզուով։

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

„ՄՇԱԿ"
ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ
1878 թվից

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՎԻ ԱՄԵՆ ՕՐ, բացի տօն և տօներին հետեւեալ օրերից։

Լրագրի գիրքը և պրոգրամման նոյն են մնալու։ Մենք կը ստանանք ԱՆՓԱԿԱՆ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ։ «ՄՇԱԿԻ» տարեկան գինը 10 ռուբլ է, կէս տարվանը 6 ռուբլ։ Գրվել կարելի է ԽՄԲԱԳՐԱՏԱՆ մէջ և պ. ԾԱՏՈՒՐԵԱՆՑԻ խանութում։

ԷՈՒՆՁԻՆ ՀԱՄԱՐՆԵՐԸ կը ծախվին 5 կոպէկով հատը։

Օտար քաղաքներից պէտք է դիմել հետեւեալ հասցէով՝ ТИФЛИСЪ Редакція «Мшакъ».

Խմբագիր—Հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Գիշերապահների խնդիրը Թիֆլիսում։—Ներքին տեսութիւն։ Նամակ Երեւանից։ Նամակ Բագուից։ Ներքին լուրեր։—Արտաքին տեսութիւն։ Աւստրիա։ Թիւրքիա։ Ֆրանսիա։ Իտալիա։—«Մշակի» հեռագիրներ։—Յայտարարութիւններ։—Տեղեկացոյց։

ԳԻՇԵՐԱՊԱՀՆԵՐԻ ԽՆԴԻՐԸ ԹԻՖԼԻՍՈՒՄ

Թիֆլիս քաղաքի վերջին ժամանակների գողերից և աւազակներից անապահով դրութիւնը դրդեց մեր քաղաքային վարչութիւնը դիմել մեր մեշչանների և արուեստաւորների դասին, հրաւիրելով նրանց քաղաքիս գիշերային կարգապահութեան վրա հսկելու, գիշերապահութիւն անելու։

Արուեստաւորները և մեշչանները համաձայնվեցան, իսկ Ուղղավան իր կողմից առաջարկեց Դումային վարձատրել յայտնի գումարով արուեստաւորներից և մեշչաններից գիշերապահութիւն անող ցանկացողներին։

Դուման ընդունեց արուեստաւորների և մեշչանների առաջարկութիւնը, բայց հրաժարվեցաւ վարձատրել գիշերապահներին իրանց աշխատանքի համար։

Այդ խնդրի վրա կարելի է նայել երկու տեսակէտից՝ մինը ընդհանուր մարդասիրական կէտից, միւսը նեղ գործնական հայեացքից։

Եթէ ամբողջ քաղաքը վտանգի մէջ է, եթէ քաղաքիս իւրաքանչիւր բնակիչը ամեն րոպէ երկիւղի մէջ է սպանված կամ կողոպտված լինելու, մեր կարծիքով այդ տեսակ դրութեան մէջ իւրաքանչիւր բնակչի պարտաւորութիւնն է հերթով մասնակցել գիշերապահութեան մէջ։ Այդ կողմից պարտաւորութիւնները պէտք է հաւասար լինեն կրած վտանգին։ Ինչպէս հարուստը, այնպէս էլ աղքատը հաւասարապէս ենթարկվում են վտանգին սպանված կամ կողոպված լինելու։ Ուրեմն պաշտպանութիւն, կամ գիշերապահութիւն անելու պարտաւորութիւնն էլ պէտք է հաւասար կերպով բաժանված լինի բոլոր բնակիչների մէջ։

Ուրիշ կողմից ստիպել միմիայն արուեստաւորներին և մեշչաններին գիշերապահութիւն անելու բացի ընդհանուր մարդասիրական կէտից անարդար լինելուց, ունի և իր գործնական մեծ անյարմարութիւններ ունևոր դասի համար։

Ստիպել աղքատ, աշխատող դասը ձրիապէս աշխատել,—դա ոչ թէ միայն վերին աստիճանի անարդար է, բայց և անգործնական է։

Ի՞նչ կարելի է պահանջել այն գիշերապահներից, որոնք պէտք է իրանց հանգստութիւնը, իրանց ֆիզիկական ոյժերը, գուցէ իրանց կեանքը զոհեն քաղաքիս ունևորներին պաշտպանելու համար։

Միթէ՞ իրանք ամբողջ օր իրանց քրտինքի մէջ մի քանի կոպէկի համար աշխատելուց յետոյ, հարուստներին էլ պէտք է ձրիապէս պաշտպանեն գողերի և աւազակների դէմ։

Միթէ քաղաքի բնակիչների պաշտպանութեան գործը կարելի է յանձնել ձրիապէս նոյն քաղաքի բնակիչների մի կամ երկու դասերին միայն, առանց մտածելու որ բարերարութեան սկզբունքի վրա հիմնված որ և է գործ, ուրեմն և քաղաքը պահպանելու գործը խախուտ և անհաստատ է միշտ։

Մենք անուանում ենք այդ տեսակ կարգադրութիւն անգործնական այն պատճառով որ աղքատ, աշխատող դասի անվարձ աշխատութիւնը ընդունելով, Թիֆլիսցիները չեն կարող նայել նրանց գիշերապահութեան վրա, որպէս մի հաստատ պաշտպանութեան վրա և անվարձ աշխատանքի վերահսկողութիւնն էլ դժուար է և անյարմար է լինում։

Ուրեմն այդ կարգադրութեամբ մի քայլ անգամ արած չէ քաղաքիս հանգստութիւնը պաշտպանելու համար։

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԵՐԵՒԱՆԻՑ

—

Յունվ. 11

Այս տարվան ձմեռը համեմատելով անցած տարիների հետ, բաւական ցուրտ է, ձիւնը յաճախ յաճախ գալիս է, չը նայելով սաստիկ ցրտին այնուամենայնիւ շատերը դոհ են եղանակի այդ դրութիւնից, վասն զի եթէ ձմեռը իւր ժամանակին ցուրտ է լինում, այդ երաշխաւոր է որ գարունը լաւ կանցնի, ծաղկած ծառերը կաղավնն ցրտի խաչվելուց։ Անցեալ տարվայ ձմեռը չափազանց մեղմ անցաւ, բայց այդ էժան չը նստեց տեղոյս այգեստէրերին, այն ինչ ցուրտը բոլորովին անցած էինք համարում, յանկարծ մի գիշերվայ ձիւնախառն անձրևը հազարների վնաս տուեց մեզ։ Որքան մենք տեսել ենք, դորա վերայ աւելացնելով և ծերերի վկայութիւնը, այն ձմեռը որ տաք է անցնում, դորա հետևանքը միշտ եղել է վնասակար բուսականութեան վերաբերութեամբ. մենք հիմնվում ենք փորձերի վրա, գուցէ մի քանիսը այլ հետևանքների և պատճառների դիմեն դարնան անակնկալ ցուրտ լինելուն, այդպիսի պարոնների հետ հակառակելու մտքից հեռու ենք։ Այո, այս տարի ցուրտ է, բայց այդ ցրտին էլ մեր քնքոյշ սեռը մի ուրիշ նշանակութիւն է տալիս. դա Աստուծոյ տնօրէնութիւնն է ասում են, որովհետև մեր զօրքերը պատերազմ են անում Թիւրքիայի դէմ, իսկ ռուսաց սոլդատը ձմեռը աւելի քաջ է կռւում։—Չը նայելով այս աղմկալից տարուն, այնու ամենայնիւ ջրօրհնեաց հանդէսը այս տարի կատարվեց չափազանց չքեղ կերպով։ Բացի երևանցիներից, այդ հանդիսին գալիս են մինչև անգամ Երևանի մերձակայ գիւղերից, քաղաքի բոլոր եկեղեցական դասը գումարվում է սուրբ Սարգիս եկեղեցին, այդտեղ սրբազան պատարագը սկսում է հանդարտ և չքեղ կերպով, պատարագը այդ օրը մատուցանում է մի բարձրաստիճան հոգևորական, նշանակած ժամին դուրս են գալիս հայ և ռուս եկեղեցականները միասին խուռն բազմութեան հետ չարժվում են Հրազդան գետը, որ այդ օրը Ցորդանան անունն է կրում, զանազան կարգի և համոզմունքի տէր մարդիկներից ճուլված է լինում այդ ամբոխը։ Դուք կը տեսնէք այդտեղ հային, որի մէջ կրօնական ճրագը վառվում է ամենավառ լուսով, թէև նա շրջապատած է ամեն տեսակ հրապուրիչ առարկաներով, գեղեցիկ սեռը կեանք է տալիս մեռած դիակին սակայն նա անփոյթ է դէպի ամենը, այդ օրը նուիրական է նորա համար, այդ ուրուականներ անզօր են պղտորել հայի կրօնական զգացմունքը։ Դուք կը տեսնէք հայ աղջկան, նա փայլում է որպէս լուսին, անմեղ աչքերը գետնին գցած, պաշտօնական քայլերով չարժվում է մոր առաջ. արդեօք դա ոչխտ է եկել, թէ ուրիշ նպատակ ունի իր մէջ, այդ գաղտնիքն էլ գիտէ Աստուած։ Դուք կը տեսնէք այս տեղ հային, որի սրտում կրօնի ճրագը չատ խաւար է լոյս տալիս, նա թէև գլուխը բաց գալիս է ձեզ հետ, բայց նա իր մտերիմ բարեկամի հետ խօսելիս, հաւատացնում է նրան որ երևակայութիւն սիրող չէ, կեանքի մեծ մասը մայրաքաղաքում անցնելով, նա սառել է եկեղեցուց։ Դուք կը տեսնէք մի այլ հայ, կեանքի մէջ ամեն տեսակ անազնուութիւն գործող, արբեցող, սուտ խօսող, սուտ վկայութիւն տուող, մի խօսքով ինչ կապ ասես նա կտրել է, բայց այսօր այս անցանելի ցրտին, շորերը հանած մերկ գետի ափին նստած սպասում է մեռոնի ջրի մէջ կաթելուն, երբ մօտեցաւ այդ բոպէն, մեր հերոսը գցում է իրան ջրի մէջ, սառուցի ահագին կտորներով ջրի հոսանքը խփում է նրա տկլոր մարմնին, բայց այդ էլ դրա համար փոյթ չէ, վասն զի դորանով նա հաւատի է որ իր բոլոր մեղքերը լուանում է այդ ջրի մէջ։ Դուք կը տեսնէք ազապ տղերանց խմբերը, դրանք ամենքը աշխատում են այնպէս ձևանալ, որ հաճոյանան դեղեցիկ օրիորդներին, դրանց ուխտն էլ ապարդիւն չէ անցնում, չատերի մուրազը կատարվում է այդտեղ։—Թողնելով ջրօրհնեաց հանդէսը, նախ քան նամակիս վերջացնելը կամենում եմ երկու անցք պատմել։ Երկու օր առաջ տեղոյս բաղնիսների մինի մէջ որի կառավարիչն Թուրք է, գտնվում է աւազանի մէջ խեղդված մի հին պօլիցիական աստիճանաւոր Տէր-Խաչատրեանց անունով. վերջին տարիներումս սպառված էին դրա նիւթական միջոցները, նա որպէս երերեալ և տատանեալ շրջում էր ամբողջ օրը փողոցներում, նա թէև ներկայումս պաշտօն չէր վարում, սակայն մխիթարվում էր, կրելով միշտ իր վրա հին պաշտօնական դերը։ Նա բարեհաճում էր և երբեմն ծածուկ փողոցներում ձևանալ որպէս գործող պօլիցիական։ Որպէս պատմում են լողանալու ժամանակը հարբած է եղել։—Վերջին անցքը ինքն ըստ ինքեան ցաւալի է. մի հայ ընտանիքի մէջ գնտակահար է լինում մի տասն և ութ ամեայ օրիորդ։ Աստում են եղբայրը երեկոյեան հրացանը վերցնում է տանից հեռանալու, քոյրը չէ թողնում. հրացանի մի ծայրը եղբօր ձեռքին է լինում. միւսը քրոջ, ամեն մինը դէպի ինքն է, քաշում, դժբաղդաբար բացվում է հրացանը. գնտակը ներս է թափանցում խեղճ օրիորդի կուրծքը և նա իսկոյն հոգին աւանդում։

* * *

ՆԱՄԱԿ ԲԱԳՈՒԻՑ

—

Յունվարի 10

«Մշակի» 77 թիւ № 91 մէջ իմ նամակիս վերջում խոստացած էի հետեւեալ անգամ Բագուի մէջ գտնվող ընկերութիւնների մասին գրել։ Հա-

մեմատ խոստմանս կը հետևեմ համառօտապէս մի քանի ծանօթութիւններ անելու։ Ամենահարկաւորն է «Մարդասիրական Ընկերութիւնը» յանուն սրբոյն Գրիգորի Լուսաւորչին հայոց, այդ ընկերութիւնը Բարձրագոյն կանոնադրութեամբ հաստատված է։ Շուտով լրանում է տասնամեայ շրջանը այդ ընկերութեան, այդ առիթ է տալի մի քանի հարցեր անելու, ինչ է գործել տասնամեայ միջոցում այդ բարձր նշանակութիւն ունեցող ընկերութիւնը, ինչ դժուարութեանց է պատահել, բայց և քաջութեամբ անցել է, և ինչ պէտք է գործէ ապագայում։ Այս հարցերը կը մնան անպատասխան գոնեայ ոչ հաճեցուցիչ պատասխաններ կը ստանանք։

Անցնում են տարիներ և ընկերութեան անդամները մնալով անշարժութեան մէջ, միայն մխիթարելով միմեանց թէ շատ և շատ գործեցին, հաստատվում են անհոգութեան մէջ, և կարծում են ճշմարտապէս ընկերութեան բարձր սրբազան նշանակութեանը համեմատ շատ են կատարել—կրկնում ենք թէ դէպի չարը ոչ ինչ են կատարել,—բայց մի և նոյն ժամանակ իրանց պարտաւորութեան համեմատ էլ առանձին ոչինչ չեն արել։

Այսպիսի դրութեան մէջ է մեր «Մարդասիրական Ընկերութեան» վիճակը սոյն այս բոպէիս, որի բարւոքելը կախված է մի հաստատ որոշմունքից։

Աւելի լաւ է, հաճելի է ինձ, ծանօթացնել կարդացողին առևտրական ընկերութեանց հետ։ Կասպից ծովի վրա «Կովկաս և Մերկուրի» նաւագնացութեան ընկերութիւնն է առաջինը և զօրեղը։ Այդ ընկերութիւնը Բագուի մէջ ունի իր մեքենայական գործարանը, որտեղ շինվում են շատ հարկաւոր գործիքներ շոգենաւերին պատկանեալ, սոյն գործարանի առջև ծովի տակ քարեայ սալայատակի վրա կայ երկաթուղի և մէկ ահագին մեծութեամբ կառք որի վրա ջրի երեսով կանգնեցնվում է շոգենաւը և երկուսը միատեղ փոքր առ փոքր մեքենայական անիւներով քաշվում են դէպի եղը, մինչև որ շոգենաւը նստում է կառքի վրա։ Երկու ժամից յետոյ այն ահագին շոգենաւը գտնվում է միանգամայն ծովի եզրում կառքի վրա, այդ կոչվում է «Ելլինգ»։ Նաւաստիքը սկսում են շոգենաւի յատակը զննել, ճնաված տեղը որոնելու, վերջապէս, ամեն հարկաւոր նորոգութիւնները անելուց յետոյ կրկին յետ են մղում ծովը, այդ մեծ անշունչ մարմինը, որը սկսում է լուռ լողալ ծովային ալիքների վրա։

Այդ ընկերութիւնը շատ անուշադրութեամբ է վարվում ապրանքի հետ ծովի և Վոլգայի սահմանների մէջ որը կոչվում է «Կարավան»։ Ամենքը տալիս են իրանց ապրանքը այդ ընկերութեանը, յուսալով որ դրանք ունեն կարավանում շատ թեթև շոգենաւեր, որոնք շուտով կը փոխադրեն Հաչտարխան։ Իսկ ընկերութիւնը համոզված լինելով, որ վաճառականները ոչ ոքի չեն կարող տալ ապրանքը, գործում է ըստ իր կամաց։ Այն ապրանքը որ մի անգամ ձգվում է կարավանում բարժերի չտեմարանը—մանաւանդ յատակը—նա միւս անգամ դուրս կը գայ երկու, երեք ամսից յետոյ։ Միւս ընկերութիւնը կոչվում է «Դրուժինա»։ Այդ ընկերութիւնը ուժով է Վոլգայում և ոչ ծովում։ Կայ և մի երրորդ «Լէբէդ» փոքրիկ ընկերութիւն։

Ա. Զ.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Մեզ խնդրում են յայտնել, որ մօտ օրերումս բացվելու է ԹԻՖԼԻՍՈՒՄ մի նոր դրախանութ «կենդրօնական գրավաճառանոց» անունով։ Դրախանութը բաց է անում պ. Ն. Տէր-Ղևոնդեան և ընկ.

—

Պ. Ն. Տէր-Ղևոնդեանը խնդրում է մեզ յայտնել, որ դուրս եկաւ մամուլի տակից իր բացատրական ձեռնարկը «Մայրենի Լեզուի» առաջին տարվայ համար։ Գրքի գինն է 60 կոպ.։

—

ԲԱԳՈՒԻՑ մեզ գրում են որ քաղաքային վարչութեան ձայնաւորները արդէն ընտրված են։ Առաջին նիստը եղել է յունվարի 14-ին։ Դումայի համար առհասարակ շատ գործ կայ։ Տեսնենք նա ինչպէս կը գործէ։ Նամակագիրը աւելացնում է, որ մթերքները օրից իր թանգանում են։

—

ԲԱԳՈՒԻՑ մեզ գրում են, որ նաւթի բեռնարկիր սայլերը, որոնք Բալախանից նաւթը մինչև գործարանը բերում էին, փութը 3—4. կոպէկով, այժմ տանում են 8—9 կոպ.։

—

Ռուսաց լրագիրները հաղորդում են որպէս լուր որ տէրութիւնը գիտաւորութիւն ունի շուտով արգելել Ռուսաստանի մէջ արտասահմանից երկաթեայ բէլսների բերելը, որպէս զի աւելի նպաստվի Ռուսաստանի երկաթեայ գործարանների արդիւնաբերութիւնը։

—

ՎԱՐՇԱՎԱՑԻ մէջ հրատարակվող լեհական «Kurjer» լրագիրը հաղորդում է որ Նորերումս մի լեհացի կաթոլիկ քահանայ, որ յայտնի է ամբողջ քաղաքին, փոխեց իր դաւանութիւնը և ընդունեց բողոքական կրօնը։ Իսկ մի քանի շաբաթից յետոյ նա պսակվեց բողոքական եկեղեցում տեղացի մի աղջկայ հետ։

—

Յունվարի 29-ին ԹԻՖԼԻՍԻ ամբողջ մամուլը բացի «Кавказъ» լրագրից, ստորագրութիւն բաց անելուց յետոյ ընծայեց տէր-Ղազար քահանայ Պալիգալֆայեանին մի ոսկեայ ժամացոյց։ Ստորագրութեան մէջ մասնակցում էին ռուսաց «Обзоръ» և «Тифл. Вѣстн.» հայոց «Փորձ», «Մշակ» և «Մեղու Հայաստանի» վերջապէս վրաց «Իվէրիա» և «Դրօէբա» լրագիրները։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՒՍՏՐԻԱ

—

Այն լուրերը որ տարածվել են թէ Աւստրիան նոր դժուարութիւններ է յարուցել և թէ չէ ուզում որ խաղաղութեան պայմանները ուղղակի Ռուսաստանի և Թիւրքիայի մէջ կապվեն, այնչափ վրդովող չեն որչափ ցոյց են տալի մի քանիսներ, մանաւանդ Կ. Պոլսից լուր հաղորդողները։

Ռուսաստանը արդէն յայտնել է որ պատերազմական տուգանքի որոշման և Թիւրքիայի խոստացած բարեկարգութիւնների համար ապահովութեան պայմանները միայն ուղղակի պէտք է կարգադրվեն երկու պատերազմող տէրութիւնների մէջ. իսկ մնացած պայմանները կարելի է որոշել եւրոպական մեծ տէրութիւնների ներկայացուցիչներից կազմված մի կոնֆերենցիայի մէջ որ հաւանական է թէ իր ժողովներն անէ Աւստրիայում։

Աւստրիայի և Անգլիայի շահերը պահանջում են մի և նոյն քաղաքականութիւնը ունենալ արևելեան հարցի մէջ և այս երկու տէրութիւններն էլ մինչև որ ապահովութիւններ են ստացել Ս. Պետերբուրգի կաբինետից իրանց իրերի մասնաւոր շահերի համար, բնաւ պատճառ չեն ունենայ իրանց չէզոք դրութիւնից դուրս գալ և նոր դժուարութիւններ և վտանգներ մէջ բերել։

Ռուսաստանը, որպէս երևում է, շատ չափաւոր է իր պահանջների մէջ և երբ նա չէ ցանկանում կապել հաշտութեան պայմանները Կ. Պոլսում, ոչ Աւստրիայի և ոչ էլ Անգլիայի չէզոք դրութիւնը չէ փոփոխվի։

Երբ Բ. Դուռը առաջին անգամ շրջաբերական ուղարկելով մեծ պետութիւններին, նրանց միջնորդութիւնը խնդրեց, Աւստրիան մերժեց այդ միջնորդութիւնը և չուզեց իր չէզոքութիւնից դուրս գալ, նկատելով որ շատ թեթև էին Թիւրքիայի ընդունած հաշտութեան պայմանները։ Նրանից յետոյ Աւստրիան ոչինչ նոր զեկուցում չէ արած Բ. Դրան, խաղաղութեան պայմանների վերաբերութեամբ։ Ուրեմն ինչ որ էր Աւստրիայի քաղաքականութիւնը հէնց պատերազմի սկզբում, նոյնն է և այժմ, փոփոխութիւն չէ կրել. նա որոշել է պահել չէզոքութիւն, պահպանելով իր ազգային շահերը։ Այդ շահերի համար նա իրաւունք ունէ մինչև մի ասիական ազդեցութիւն գործել խաղաղութեան գաշնագրի մէջ։ Այդ իրաւունքն է որ Աւստրիան յիշեցնում է այժմ և որոնք արդէն ծանօթ լինելով Ռուսաստանին, ի հարկէ ցանկանում է յարգել այդ իրաւունքները և ինչպէս կարծում են ընդհանրապէս, բացի մի քանի պայմաններից, միւսները կորոշվեն Աւստրիայի, Գերմանիայի, Ֆրանսիայի և Իտալիայի խորհրդակցութեամբ և նրանց շահերի համաձայն կարգադրութիւններով։

Ռուսաստանի խաղաղասիրական ցանկութիւնները շատ հեռի են որ և է եւրոպական պետութեան շահերի ճնշելուց և ինչպէս երևում է, Ս. Պետերբուրգի կաբինետը ամենին պէտք է զլխանցնէ իր պահանջների չափաւորութեամբ։ Թիւրքիան այնպիսի նեղ դրութեան մէջ ընկած է այժմ որ ստիպվել է յաղթողի ամեն պահանջները կատարել։ Ադրիանօպոլ արդէն գրավվել է և Կ. Պոլսի ամրութիւնների գիծը պաշտպանելու համար գոնէ 100,000 զօրք հարկաւոր է որ Թիւրքիան չունէ այժմ պատրաստ։ Միլէյմանն-փաշայի ճանապարհը կտրել են Ադրիանօպոլից և հետևապէս նա չէ կարող երկաթուղով հաղորդակցութիւն ունենալ Կ. Պոլսի հետ։ Նա ստիպված է շատ վանդաւոր ճանապարհներից պտոյտներ անելով հասնել Զատալքա որ Կ. Պոլսի ամրութիւնների կենդրոնատեղն է։ Սուլթանը շուարած ուզում է փախչել Բրուսսա։ Այս տագնապալի և յուսահատ դրութեան մէջ Ռուսաստանը կարող էր ծանր պայմաններ առաջարկել, բայց չուզելով եւրոպական և ոչ մի տէրութեան կասկածներ շնչել, նա մեծ ապացոյցներ է տալի խաղաղութեան։

Ծանր հարցերից մէկն էլ Ռումինիայի սահմանների դրստվելն է։ Երբ Բեսարաբիայի այն մասը որ 1856-ի դաշնագրութեամբ օսմանեան պետութեան թողվեցաւ, այժմ Ռումինիայից առնվելով վերադարձնվի Ռուսաստանին, ինչ փոխարինութիւն պէտք է լինի Ռումինիային որ միանգամայն Աւստրիային դժգոհութիւն չը պատճառէ։ Այս հարցերը քիչ թէ շատ կորոշվեն մի քանի օրից յետոյ։

ԹԻԻՐՔԻԱ

—

«Indépendance Belge» լրագրում կարդում ենք Տրապիզոնից գրված հետևեալ նամակը։

Տրապիզոն, 5 յունվարի։ Ղազի Ահմեդ Մուխթար փաշան անցած երկուշաբթի օր հասաւ այստեղ, իր հետ ունենալով վաթսուն հեծելազօրք։ Ուզում էր անմիջապէս գնալ Կ. Պոլիս, բայց մի քանի օր է որ ծովը շատ սաստիկ ալէկոծվում է և շոգենաւերը չեն համարձակվում գնալ։ Հաւանական է որ այս երեկոյ կարողանայ երթալ։ Տրապիզոնի ժողովուրդը շատ ցուրտ ընդունելութիւն տրաւ նրան. կիները որոնք մեծ բազմութիւնով լցված էին Մուխթարի անցած ճանապարհի վրա, այլ մարդերի պէս հանգիստ չէին կենում իրանց տեղ. արհամարհական խօսքեր էին ասում նրան և եթէ պոլիցիան չը միջամտեր և մեծ զգուշութիւն չանէր, կիները ծանր անկարգութիւններ կանէին։ Մուխթար փաշան էլի այն մարդը չէ որ մենք տեսանք տասամսի չափ առաջ, երբ Կ. Պոլսից եկաւ և գնում էր ասիական գործող բանակին հրամանատարութիւն անելու։ Այժմ ամեն մարդ նշմարում է նրա երեսի վրա յուսահատութիւն։ Իր կերպարանքը որ Կ. Պոլսից եկած ժամանակ այնչափ վեհ էր, այժմ մի տեսակ խոր թմրութիւն է զգեցել որ մարդ չէ ճանաչում նրան։ Բազմութեան միջից անցած ժամանակ այնչափ անուշադիր էր որ իրան բարևողներին փոխադարձ բարև էլ չէր տալի։ Քանի մնում է այստեղ, երբէք տանից դուրս չէ եկած։ Մի քանի մարդիկ որոնք կարողացան երթալ իր մօտ տեսակցել, ասում են թէ շատ չէ սիրում խօսել և լուռ է մնում։

Դեռ որոշ չէ թէ ինչ պատճառով յետ է կանչուած Կ. Պոլսից։ Հրաժարված չէ իր պաշտօնից, որովհետև Իսմայիլ-Հակի փաշան առժամանակեայ կերպով է անուանվել իր տեղ։ Ընդհանրապէս կարծում են այստեղ թէ Կ. Պոլսից կանչվել է որ ճիշդ տեղեկութիւններ տայ կառավարութեան զինուորական դրութեան վերաբերութեամբ Ասիայում։ Եթէ կառավարութիւնը Մուխթարի խորհուրդները լսի, տարակոյս չը կայ որ մինչև վերջը դիմադրել ուզող կուսակցութիւնը կը կորցնէ իր ազդեցութիւնը և սուլթանը կարող է խաղաղական բանակցութիւններ սկսել։ Ինչպէս Կ. Պոլսում, այս տեղ էլ կան մի քանիսներ որոնք չեն ուզում լսել խաղաղութեան խօսքեր. բայց դրանք կազմում են մի շատ աննշան փոքրամասնութիւն և դրանից շատերն էլ քաղաքային պաշտօնակատարներ են որոնց հաշիւներին շատ դուր չէ գալի որ Թիւրք կառավարութիւնը ստիպվի օտարի միջամտութիւնը ընդունել, խոստացած բարեկարգութիւնները գործադրելու համար։

Թէև այս կողմեր առատ ձիւն է գալի, բայց ռուսները առաջանում են Երզրումի կողմից, իրաւ է թէ շատ կամաց քայլերով, բայց միշտ առաջ են գնում և շատ հաւանական է որ յունվար ամիսը չը վերջացած տիրեն Երզրումի։ Վերջին սուրհանդակի գնացած երեկոյին, այն է դեկտ. 28-ին, ռուսները հետաքննութիւններ անելով հասած էին մինչև Ըլըճա որ մի գիւղ է Տրապիզոնի ճանապարհի վրա և տիրել էին դաշտի մեծ մասին, քաղաքի հիւսիսային և հիւսիս—արևմտեան կողմերում։ Շատերը կարծում էին անգամ թէ քիչ է մնացել որ տիրեն Տրապիզոնի ճանապարհին։ Սրա համար թղթատարին սովորական ժամանակից 24 ժամ առաջ ճանապարհ էին դրել։

Արդէն քան օրից աւելի է որ Երզրումի նահանգի քաղաքային վարչութիւնը փոխադրվել է Բաբերտ (Բայբուրտ). այդ տեղից էլ կը քաշվի դէպի Գիւմիւշ-Հանէ երբ ռուսները տիրեն Տրապիզոնի ճանապարհին։

Երզրումի մէջ եղած զօրքերի առողջսկան դրութիւնը շատ վատ է։ 5,000 հիւանդ խիտ առ խիտ լցված են հիւանդանոցների մէջ որոնք շինվել էին 3,000 հիւանդի համար միայն։ Տիֆ հիւանդութիւնը սարսափելի կոտորած է անում նրանց մէջ. օրական 120—150 մարդ մեռնում են։ Բացի սրանից, հիւանդութիւնների պատճառով բժիշկների թիւն էլ շատ պակասել է. նոյեմբերի սկզբում 32 բժիշկ կային Երզրումի մէջ. դրանցից 8 մեռել են, մնացածների կէսն էլ հիւանդ պառկած են անկողնում։ Միայն 10 կամ 12 բժիշկ է մնացել 5000 հիւանդի խնամելու համար։ Բաբերդում էլ հիւանդանոց է շինվում ուր պիտի փոխադրեն Երզրումից այն հիւանդները որոնք կարող են ճանապարհորդութեան տոկալ։ Երկու հիւանդանոց էլ շինվում է Գիւմիւշ-Հանէ և Համզա-քեոյ, Տրապիզոնի ճանապարհի վրա։

Թէև Երզրումի մէջ ցորեն շատ կայ, բայց շրջակայ ջաղացները չեն կարողանում ալիւր հասցնել և արդէն բաւական ժամանակ է որ զօրքերը հաց չեն ուտում, այլ ջրի մէջ խաշած ցորենով են ապրում։ Տարակոյս չը կայ որ եթէ երկար ժամանակ այդպէս ապրեն, իրանց առողջութիւնը շատ կը վնասվի։

Բաթումի կողմը փոքրիկ կռիւներ շատ անգամ են պատահում, բայց մեծ ճակատամարտ դեռ չէ եղել։ Միշտ կարծում են Թիւրքերը թէ հաւանական է որ ռուսները նաւերով գան և դուրս գան քաղաքի հարաւակողմը։ Մի այսպիսի կասկած նրա համար է տարածվել ամեն կողմ որ զինուորական վարչութիւնը հանգցնել է տուած նաւահանգիստի փարոսը և հրաման է տուած որ քաղաքի մէջ ամեն տեղ ճրագները հանգցնեն երբ արևը մայր մնած և երկու ժամ էլ անցկացած լինի։

Արդէն բաւական ժամանակ է որ ռուսները գտնվում են Արտանուշի շրջակաները և հաւանական է որ սպասում են յարմար բոպէի որ գնան Բաթումի վրա։ Արդուինում եղող Թիւրքերն էլ զանազան տեղեր զօրքեր են շարել երկու ժամի չափ ճանապարհի վրա Արտանուշի ուղղութիւնով, բայց թւով շատ քիչ են, այնպէս որ ռուսները կարող են այդ ճանապարհներին տիրել և բաւականին դիւ-

բութիւնով հասնել Բաթումի մօտ ուր թիւրքերը կարող են աւելի զօրեղ դիմադրութիւն անել որովհետև ամրութիւններ են շինում Երգէի շրջականերում Զօրուդ-Սուի վրա։

Բաթումի բանակին նոր օգնութիւններ էլ ուղարկվեցան և այժմ զօրքերի թիւը հասնում է 23 հազարի։ Ասում են թէ Դէրվիշ փաշան էլի 10 հազար զօրք է ուզել, բայց հաւանական չէ որ կարողանան ուղարկել։

Այդ 7 մերժված դէպուտատներից 3-ը յուսահատված, հրաժարվում են իրանց վերստին կանդիդատ ներկայացնելուց։ Տարակոյս չը կայ որ այժմ դրանց տեղ կընտրվեն հանրապետական դէպուտատներ, մինչև որ մայիսի 16-ի մինիստրութիւնը կործանված և ժողովրդի ձայնը ազատված է պաշտօնեաների ճնշումից։

Մայիսի 16-ի մինիստրութիւնը իր կողմնակիցներից դէպուտատներ ընտրել տալու համար, շատ լրագիրներ խափանել էր, շատերին տուգանքի էր դատապարտել և բացի սրանից, մայիսի 16-ից մինչև դեկտ. 14, դատաստանի ենթարկել էր 5,271 մարդկերանց, որովհետև սրանք կառավարութեան անհաճոյ բաներ էին խօսել կամ հրատարակել դէպուտատների ընտրութեան մասին։

Այժմ բօնապարտեանները և կղերականները որոնք փոքր մաս են կազմում դէպուտատների ժողովում, բորբոքվել են մեծամասնութեան դէմ որ չը կամեցաւ վաւերացնել այն 7 անձերի ընտրութիւնը։ Դուքս դը Լա Բոշֆուկո եօթ անվաւեր դէպուտատներից մինը, շատ ծանր խօսքեր խօսեցաւ պարլամենտի դէմ, նրանից բաժանված ժամանակ։

Ցեսադիմականները նրա համար աւելի կատաղել են այժմ և բորբոքվել են պարլամենտի դէմ, որովհետև մնացուկները դարտակվել են, փողերը սպառվել են, ինչպէս խոստովանում է բօնապարտական լրագիրներից մինը և երբ դրանք փող չունեն, ընտրութիւնների մէջ էլ չեն աջողվում։ դրանք փողով միայն կարողանում են գնել ժողովրդի ձայնը որ հանրապետականների կողմն է. այժմ Ֆուրտու ներքին գործերի մինիստր չէ որ վատնէր կառավարութեան փողերը այդ նպատակի համար։ Մայիսի 16-ի մինիստրութիւնը մի շրջանակում (arrondissement) միայն 41 դպրոցական տեսուչ տեղափոխած, 25 քաղաքապետ և 19 քաղաքապետի տեղապահ պաշտօնից հրաժարեցրած և 7 քաղաքապետական ժողով լուծած էր որ աջողվի իր կողմնակիցներից դէպուտատներ ընտրել տալ։ Կղերականներն էլ իրանց կողմից ճնշում էին ժողովրդին որ հանրապետականների համար քուէ չը տան. կիներին խոստովանեցրած ժամանակ մերժում էին նրանց մեղքերի թողութիւն տալ եթէ նրանց ամուսինները կողմնակից էին լինում հանրապետական կանդիդատի, մերժում էին թշուառներին բարեգործական ընկերութիւններից որոշված հացը տալ և այն ռամիկ մարդերին որոնք չէին ուզում իրանց քուէները տալ պաշտօնական կանդիդատի համար, խաբում էին թէ պրուսիացիները սպառնում են վերստին մտնել Ֆրանսիա։

Ահա այսպէս քաղաքական և կրօնական ճնշումների ներքև կատարվեցան Ֆրանսիայի դէպուտատների վերջին ընտրութիւնները, բայց էլի չը կարողացան այդ յեսադիմականները մեծամասնութիւն ունենալ պարլամենտում։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

ՖՐԱՆՍԻԱ

—

Եօթ աջակողմեան երեսփոխաններ մերժվեցան պարլամենտի անդամակցութենից, որովհետև հաստատուեցաւ որ դրանց ընտրութիւնը աջողվել էր 16-ի մինիստրութիւն ինտրիգաներով։ Ամեն ազօրինութիւն, ամեն խարդախութիւն գործ էին դրել որ պաշտօնական ընտրելիները իրանց կողմը ունենան ընտրողների բազմութիւնը։

Այդ 7 մերժված դէպուտատներից 3-ը յուսահատված, հրաժարվում են իրանց վերստին կանդիդատ ներկայացնելուց։ Տարակոյս չը կայ որ այժմ դրանց տեղ կընտրվեն հանրապետական դէպուտատներ, մինչև որ մայիսի 16-ի մինիստրութիւնը կործանված և ժողովրդի ձայնը ազատված է պաշտօնեաների ճնշումից։

Մայիսի 16-ի մինիստրութիւնը իր կողմնակիցներից դէպուտատներ ընտրել տալու համար, շատ լրագիրներ խափանել էր, շատերին տուգանքի էր դատապարտել և բացի սրանից, մայիսի 16-ից մինչև դեկտ. 14, դատաստանի ենթարկել էր 5,271 մարդկերանց, որովհետև սրանք կառավարութեան անհաճոյ բաներ էին խօսել կամ հրատարակել դէպուտատների ընտրութեան մասին։

Այժմ բօնապարտեանները և կղերականները որոնք փոքր մաս են կազմում դէպուտատների ժողովում, բորբոքվել են մեծամասնութեան դէմ որ չը կամեցաւ վաւերացնել այն 7 անձերի ընտրութիւնը։ Դուքս դը Լա Բոշֆուկո եօթ անվաւեր դէպուտատներից մինը, շատ ծանր խօսքեր խօսեցաւ պարլամենտի դէմ, նրանից բաժանված ժամանակ։

Ցեսադիմականները նրա համար աւելի կատաղել են այժմ և բորբոքվել են պարլամենտի դէմ, որովհետև մնացուկները դարտակվել են, փողերը սպառվել են, ինչպէս խոստովանում է բօնապարտական լրագիրներից մինը և երբ դրանք փող չունեն, ընտրութիւնների մէջ էլ չեն աջողվում։ դրանք փողով միայն կարողանում են գնել ժողովրդի ձայնը որ հանրապետականների կողմն է. այժմ Ֆուրտու ներքին գործերի մինիստր չէ որ վատնէր կառավարութեան փողերը այդ նպատակի համար։ Մայիսի 16-ի մինիստրութիւնը մի շրջանակում (arrondissement) միայն 41 դպրոցական տեսուչ տեղափոխած, 25 քաղաքապետ և 19 քաղաքապետի տեղապահ պաշտօնից հրաժարեցրած և 7 քաղաքապետական ժողով լուծած էր որ աջողվի իր կողմնակիցներից դէպուտատներ ընտրել տալ։ Կղերականներն էլ իրանց կողմից ճնշում էին ժողովրդին որ հանրապետականների համար քուէ չը տան. կիներին խոստովանեցրած ժամանակ մերժում էին նրանց մեղքերի թողութիւն տալ եթէ նրանց ամուսինները կողմնակից էին լինում հանրապետական կանդիդատի, մերժում էին թշուառներին բարեգործական ընկերութիւններից որոշված հացը տալ և այն ռամիկ մարդերին որոնք չէին ուզում իրանց քուէները տալ պաշտօնական կանդիդատի համար, խաբում էին թէ պրուսիացիները սպառնում են վերստին մտնել Ֆրանսիա։

Ահա այսպէս քաղաքական և կրօնական ճնշումների ներքև կատարվեցան Ֆրանսիայի

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Ցունվարի 28-ին։ Ռուսաց ռուբլ Լօնդօնի վրա արժէ 26 պէնս, Համբուրգի վրա ռուսաց 100 ռուբլ արժէ 222 մարկ և 50 ֆէն., Փարիզի վրա 237 ֆրանկ, Բերլինի վրա 224 մարկ, 50 ֆէն.։ Պետական բանկի 5% տոմսակը առաջին շրջանի արժէ $96\frac{7}{8}$ ռուբլ, երկրորդ $96\frac{1}{2}$ ռ., երրորդ $95\frac{1}{4}$ ռ., չորրորդ 94 ռ., Ներքին առաջին փոխառութեան տոմսակը (վիիդրիշնի) արժէ 233 ռուբլ, երկրորդ 233։ Արևելեան փոխառութեան տոմսակը արժէ $93\frac{1}{4}$ ռուբլ, պօլուիմ պերիալի գինը 7 ռուբլ 55 կոպէկ է։ Տրամադրութիւնը թոյլ է։ Վերջը ամրանում է։

ԼՕՆԴՕՆ. փետրվարի 7-ին (յունվ. 26)։ Ռէյտերի ընկերութեանը հեռագրում են Կ. Պօլսից որ զինադադարման պայմանների կապելու պատճառով թիւրքերը վերցրին Կ. Պօլսի ամրացած գծերը։

ԼՕՆԴՕՆ. փետրվարի 8-ին (յունվարի 27)։ «Morning Post» լրագիրը կարծում է, որ տերութիւնը միջոցներ պիտի գործ դնէ անգլական շահերը պաշտպանելու համար և յայտնում է որ Թիւրքիայի և Ցունաստանի մէջ կապվեցաւ զինադադարը։ Լրագիրը ասում է թէ Անգլիան կը պահանջէ որ այդ զինադադարը կապվի այն պայմանով որ Ցունաստանի պահանջողութիւնները ներկայացրած լինեն կոնֆերենցիայի քննութեանը, և յունաց զօրքը կը մնայ Թիսալիայի և Էպիրոսի մէջ, իսկ Թիւրքիան իր կողմից պարտաւորվում է յարձակումներ չանել Կրիտեան ապստամբների դէմ։

ՎԻԵՆՆԱ. յունվարի 29-ին։ Պատգամաւորների ժողովում Գիսկրա և Գէնբէտ պատգամաւորները տէրութեան հարց առաջարկեցին, արդեօք զինադադարման հրատարակված պայմանները նոյն իսկ նոքա են որոնք ստորագրված են եղել, թէ ոչ։ Իսկ եթէ կը յայտնվի որ ստորագրվածները համապատասխան չեն հրատարակվածներին, այն ժամանակ ինչ դիտաւորութիւն ունի անելու կառավարութիւնը։

ԲՈՒԽԱՐԷՍՏ. փետրվարի 8-ին (յունվարի 27)։ Երեկ բուլգարական Սենատը և պատգամաւորների ժողովը քննութեան դցելով Ռուսաստանին Բուլգարական Բեսարաբիայի մի մասի զիջումն անելու խնդիրը, պատգամաւորների ժողովը միաձայն մերժեց այդ առաջարկութիւնը։

ԼՕՆԴՕՆ. յունվարի 27-ին (փետրվ. 8) Երեկ ամբոխը ընդունեց Լորդ, Բիկոնսֆիլդին ոգևորված ձևով երբ որ նա ուղևորվում էր դէպի պարլամենտը։ Իսկ Գլադստոնի բնակարանում և «Daily News» լրագրի խմբագրատան մէջ ամբոխը կոտրեց պատուհանների ապակիները։ Համայնքների ժողովում Ֆոքստէր պատգամաւորը յետ առաւ իր կարծիքը ընդդէմ տէրութիւնից պահանջած նոր կրեդիտի բացման։

ԼՕՆԴՕՆ յունվարի 29-ին։ Երկար վիճաբանութիւններից յետոյ հասարակաց պալատը առաւելութեամբ 328 ձայների 124 ձայների դէմ ընդունեց կառավարութեան պահանջը կրեդիտ բաց անելու մասին։ Կառավարութեան մեծամասնութիւնը 204 էր։ Նշանակութիւն ունեցող ձայներ կուսակցութեան առաջնորդ, Նրանց թուում և Գարտինգեմը ձայն տալուց հրաժարվեցան. Գլադստոնը ձայն տուեց կրեդիտ բաց անելու դէմ։ Քուէարկութեան եզրակացութիւնը իմանալով, մինիստրների կուսակցութիւնը բարձրաձայն իր ուրախութիւնը յայտնեց։

ԼՕՆԴՕՆ. յունվարի 29-ին։ «Morning Post» սաստիկ պահանջում է որ Անգլիան միայն այն ժամանակ մասնակցէ կոնֆերէնցիային, երբ Նիւթական երաշխաւորութիւններ կունենայ։ Լրագրի կարծիքով Սև ծովի տիրելը պէտք է անկասկած պայման լինի որ Անգլիան օգնէ վերջնական խաղաղութեան պայմանների քննութեան գործին։ «Times» յայտնում է յոյս որ Ֆրանսիան Անգլիայի հետ միասին կը պաշտպանէ երկու պետութիւնների համար էլ նշանաւոր Արևելեան շահերը։ Հասարակաց պալատի երեկվայ նստին Նօրդսկօա յայտնեց որ Թիւրքաց դեսպան Մուսուրուս-փաշան պարտաւորեցրեց Դէրբիին բոլորովին հերքել «Daily News» լրագրի հաղորդած լուրը որ իբր թէ Բրիտանիայի կառավարութիւնը պաշտօնական կերպով չէր դիմում Թիւրքիային որ նա հակառակվի։

ԼՕՆԴՕՆ. յունվարի 28-ին։ Նրանից յետոյ որ Նօրդսկօա խոստացաւ հասարակաց պալատում, որ հէնց որ պալատը մանաժողովի կը փոխվի, մնացած վիճաբանութիւնները կրեդիտի մասին կը շարունակվեն ուրբաթ օրը։ Պալատը 295 ձայների բազմութեամբ 96 ձայների դէմ վճռեց մանաժողով կազմել։ Լորդ Դէրբին կարդաց Լայարդի հեռագիրները, որոնցից մէկի մէջ որ նշանակած էր փետրվարի 5-ին, յայտնվում էր որ Բ. Դուռը մեծ անհանգստութեան մէջն է և չը կարողանալով բացատրել Ռուսաստանի վարմունքը, դիմեց առաջարկութիւններով Մեծ Իշխան Նիկոլայ Նիկոլաևվիչին, յետոյ Լայարդը գրում է. խաղաղութեան հիմնական պայմանների ստորագրելու ժամանակից և զինադադարման պայմանագրութեան ժամանակից հինգ օր անցաւ, իսկ Բ. Դրան նրա որոշումն դեռ ևս չէ հասցրած և յայտնի չէ նրան իսկական պայմանները։ Միւս հեռագրում երեկվայ թուից Լայարդը ասում է որ ռուսաց կաբինիտը պնդում է որ Բէկմէջէ գծերը խափանվեն, այս բանը զինադադարման պայմաններից մէկը համարելով և այս գծերը խափանվելով Կ. Պօլիսը առանց պաշտպանութեան կը մնայ։ Դէրբին աւելացրեց որ Բէկմէջէն Թիւրքաց ամրացած գծերի մէկ մասն է կազմում որ կորում են Թերակղզին, և որ հեռու են Կ. Պօլսից 30 անգլիական մղոնից պակաս։ Հասարակաց ժողովում Բօրկը յայտնեց որ Սև ծովի պաշարումն դադարեցրած է, զինադադարման պատճառով, Օդէսայի հետ յարաբերութիւնները ազատ են։ Նօրդսկօաը յայտնեց որ Ռուսաստանը Բրիտանական տէրութեանը ոչինչ բան չէր հաղորդում, Բրիտանական նաւատորմի Դարդանել մտնելու պատճառով, ռուսաց զօրքերի Բէսարաբիայում կենդրոնանալու մասին կառավարութեանը ոչինչ լուր չէ հասցրած։ Անգլիան ընդունեց։ Աւստրիայի հրաւէրը մասնակցել կոնֆերէնցիային Լօրդերի պալատում Դէրբին մանանիշ արաւ Ռուսաստանի և Սերբիայի պաշտօնական տեղեկութիւնների վրա, այն բանի մասին որ զօրքերին հրամայած է դադարեցնել զինուորական գործողութիւնները, այդ մի և նոյն հրամանը տուել էր Բ. Դուռը փետրվարի 2-ին։ Շատ կարելի է ասաց ատենաբանը որ զանազան քայլեր առաջ եկան ոչ թէ համաձայնութեան հակառակ, այլ համապատասխան զինադադարման պայմաններին։ Բրիտանական տէրութիւնը չը գիտէ զինադադարման պայմանները, բայց Բ. Դուռը ինչպէս երևում է այս առարկայի վերաբերութեամբ նոյնպէս քիչ տեղեկութիւն ունէ։ Բրիտանիան կաբինէտը դիմեց այսօր Պետերբուրգ հեռագրով, խնդրելով բացատրել ռուսաց զօրքերի շարժողութեան նպատակը, և մի և նոյն ժամանակ ցոյց տուեց Ուէլսէյ թագաւորի յուլիս ամսին յայտնած դիտաւորութեան վրա, որ թագաւորը Կ. Պօլիսը կը պաշարէ ոչ թէ զինուորական պատասխանատուութեանը բաւականութիւն տալու մտքով, այլ գործի ընթացքին նայելով եթէ այդ անհրաժեշտ կը համարվի։ Տաճկաստանի դիմադրութիւնը վերջացաւ, այս պատճառով այժմ այնպէս անհրաժեշտ չէ Կ. Պօլսի պաշարելը։ Երկու ժամ առաջ ես տեղեկացայ Շուվալովի հետ, որը այն ժամանակ էր ստացել ոչ հաստատութիւն ոչ հերքումն, իր հարցմունքին նմանապէս չէին ստացել հաստատութիւն Ֆրանսիական, գերմանական և աւստրիական կառավարութիւնները։ Կօմս Շուվալովի ստացած վերջին տեղեկութիւններից երևում է որ մի տեսակ արդելք կայ հեռագրական հաղորդակցութեան մէջ։ Գերզեգինը ժողովի ուշադրութիւնը դարձրեց Թիւրքիայի վերաբերութեամբ ձեռնարկած միջոցների նոր փոփոխութիւնների մասին։ Այս բանի վրա Դէրբին բացատրեց, որ մեզ հաղորդած անբաւականացուցիչ լուրերի վերաբերութեամբ, նա իսկոյն ստացաւ Շուվալովից հեռևեալ տեղեկութիւնը. հարցնելով ռուսաց կառավարութենից թէ ճշմարիտ է արդեօք որ ռուսաց զօրքը առաջ է գնում դէպի Կ. Պօլիս և արդէն տիրել է մէկ ամրութիւն որ թիւրքաց մայրաքաղաքի պաշտպանողական գծերի մէկ մասն է կազմում, նա ստացաւ իշխան Գորչակովից հետևեալ պատասխան. «զօրքերի բոլոր գլխաւորներին հրամայած է դադարեցնել զինուորական գործողութիւնները ասիական և եւրոպական պատերազմական բեմերի բոլոր գծի երկայնութեան վրա։ Ոչ մի ճշմարիտ խօսք չը կայ։ Դէրբին աւելացրեց որ այս պատասխանում չէ յիշված թէ ինչ դիպուածների վրա է խօսքը, շատ կարելի է, շարունակում էր Դէրբին մի որ և իցէ ամրութիւն վերցնելու հերքումն է և այս պատճառով նա անպայման չէ հերքում սրանից աւելի վաղ կարդացած տեղեկութիւնը, բայց անկասկած շատ փոփոխում է գործերի դրութիւնը, և որովհետև ես հարցի մէկ կողմը ցոյց տուի, ինձ պարտաւոր էի համարում և միւսը ցոյց տալ։ Ժողովը նիստը յետաձգեց։

ՎԻԵՆՆԱ. փետրվարի 9-ին (յունվ. 28) Անգլիական դեսպան Լայարդ խորհուրդ է տալիս հայոց պատրիարքին պահանջել Թիւրքիայից Հայաստանին ինքնավարութեան տալը, խոստանալով, որ Անգլիան այդ երկրի իրաւունքների պաշտպան կը հանդիսանայ լինելու կոնֆերէնցիայում։ Բայց ասում են իբր թէ հայոց ազգային ժողովը մերժեց այդ առաջարկութիւնը։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ. Վիէննայից հեռագրում են «Голосъ» լրագրին, փետրվարի 9-ից (յունվարի 28) որ աւստրիական պալատին մօտ շրջաններում կարծում են, որ եթէ Ռուսաստանը կը համաձայնվի Վիէննայի մէջ կոնֆերէնցիայի կայանալուն, այն ժամանակ Անդրաշի դիտաւորութիւն ունի առաջարկել նախագահութիւնը Գորչակով իշխանին, որպէս աւագագոյն մինիստրին և որպէս Ռուսաստանի ներկայացուցչին։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ. յունվարի 28-ին։ Այստեղ հեռագիր է ստացված որ անգլիական նաւատորմը արդէն մտել է Բոսֆորի նեղուցը։ «Agence Generale Russe» այդ առիթով ասում է։ «Թէև անգլիական նաւատորմի Բոսֆորի մէջ մտնելու շարժառիթը, ինչպէս կարծում են, Կ. Պօլսի քրիստոնեայ ժողովուրդը պաշտպանելու անհրաժեշտութեան վրա է հիմնված, բայց ինքն իրաւունքը տալիս է Ռուսաստանին գործողութեան կատարեալ ազատութիւն։ Եթէ անգլիական նաւատորմի ներկայութիւնը Բոսֆորում նպատակ ունի նպաստել կարգապահութեան Կ. Պօլսի մէջ և արևելեան խնդրի օրինաւոր և արդարացի լուծման, այն ժամանակ նորա Բոսֆորի մէջ մտնելը կընդունվի Ռուսաստանի կողմից որպէս օգնութիւն, որի մասին Ռուսաստանը յիշում էր դեռ ևս Բերլինեան յիշատակագրի մէջ և գրաֆ Սումարոկով-Էլստոնի կողմից Վիէննայում արած ազդարարութեան մէջ։ Բայց այնու ամենայնիւ Ռուսաստանը կը վարվի համեմատ Անգլիայից ընդունելու դիրքին։»

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ՀՈՎԱՆԱՒՈՐՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ ՅԱՅՏՆՈՒՄ Է

Ա. Որովհետև արդէն ժամանակը լրանում է, պ. պ. անդամներից խնդրում են ՄՏՑՆԵԼ ԻՐԱՆՑ ԱՆԴԱՄԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԸ ԱՆՑԵԱԼ, ԸՆԹԱՑՈՂ ԵՒ ԵԿՈՂ ՏԱՐԻՆԵՐԻ ՀԱՄԱՐ. Փողերը պէտք է յանձնել ընկերութեան գանձապահ պ. Սերգէեվին Փոխադարձ կրեդիտի ընկերութեան վարչութեան մէջ, Երևանեան հրապարակի վրա. Բ. պարբերական նիստերը ընկերութեան վարչութեան համար նշանակած են իւրաքանչիւր ամսի 5, իսկ ընդհանուր ժողովի համար իւրաքանչիւր ամսի 20. Ժողովները լինելու են Զիլթախովի տանը при канцеляріи коннозаводскаго округа. Երեկոյեան ժամի 7-ին, գ. Բերենչամի խանութում և Ազնաուրովի ծխախոտի խանութում ծախվում են պ. Կասումովի ընկերութեանը նուիրած վրացերէն ոտանաւորները հատ 20 կ.։

Գանձակի նահանգապետի թոյլտուութեան № 1557 համեմատ պատիւ ունեմ յայտնել, որ 1878 թվի յունվարի 1-ից ԲԱՑԵՄ ԱՐԵԼ ՇՈՒՐԻ ՏՊԱՐԱՆ ԵՒ ԿԱԶՄԱՐԱՐԻ ԽԱՆՈՒԹ, թէ տպարանին և թէ կազմարարին տված ՊԱՏՈՒԻՐՆԵՐԸ ՇԱՏ ԷԺԱՆ ԳՆՈՎ ԵՄ ԸՆԴՈՒՆՈՒՄ ԵՒ ԽՈՍՏԱՆՈՒՄ ԵՄ ՃՇԳՈՒԹԵԱՄԲ ԵՒ չուտ կատարել, պատասխանատուութիւնը ճշգութեան համար ինձ վրա առնելով։ Տպարանը և կազմարարի խանութը գտնվում են իմ սեփական տանը և յանկացողները կարող են զիմել վերևը գրած հասցէով.

Մ. ՄՂԴՍԻ ԱԿՕԲԵԱՆՑ

1—2

Въ книжномъ магазинѣ Ушіарова продается книга и описаніе древностей города Тифлиса, соч. Платона Іосселіани. Цѣна 50 к.

Ուշիարովի գրքերի խանութում ծախվում է «Թիֆլիսի հնութիւնների նկարագրութիւնը» հեղ. Պլատոն Իոսելիանի, գինը 50 կ.։

1—4

ՍՏՈՐԱԳՐՈՒԹԻՒՆ 1878 թ. համար

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

«ԴՐՕԷԲԱ»

1878 թվին կը հրատարակվի մի և նոյն պրոգրամայով և մի և նոյն ժամանակներում այսինքն ԱՄԵՆ ՕՐ ինչպէս և այս տարի.

ՍՏՈՐԱԳՐՈՒԹԻՒՆԸ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ Է

Թիֆլիսում. խմբագրութեան մէջ, Սերգիևվկի փողոցի վրա Ի. Գ. Ամիրաղովի տանը, № 8 «Քաղաքային Դումայի մօտ».

Օտարաքաղաքացիք զիմում են իրանց պահանջով «Դրօէբա» լրագրի խմբագրութեանը հետևեալ հասցէով. Въ Тифлисъ въ Редакцію газ. «Дроэба».

Մէկ տարվանը. . . . 8 ր. — »
½ տարվանը. . . . 5 » 50 կ.
4 ամսվանը. . . . 3 » — »

Ծանօթութիւն. Բացի վերոյիշեալ ժամանակներից ուրիշ ժամանակ ստորագրութիւնը չէ ընդունվում.

Подписка на 1878 годъ.

ПОЛИТИЧЕСКАЯ И ЛИТЕРАТУРНАЯ ГАЗ.

ДРОЭБА

въ 1878 году будетъ выходить по той же программѣ и въ тѣже сроки, т. е. ЕЖЕДНЕВНО,

ПОДПИСКА ПРИНИМАЕТСЯ

въ Тифлисѣ: въ редакціи, на Сергіевской улицѣ, домъ И. Е. Амирагова, № 8 (около Городской Думы).

Въ Тифлисъ въ Редакцію газ. „Дроэба."

ПОДПИСНАЯ ЦѢНА

На годъ . . . . . 8 р. — „
½ года . . . . . 5 „ 50 к.
4 мѣсяца . . . . . 3 „ — „

Примѣчаніе. На другіе сроки, кромѣ поименованыхъ, подписка не принимается.

3—3

ОБЪ ИЗДАНІИ ВЪ 1878 ГОДУ

„ДОНСКОЙ ПЧЕЛЫ"

ПОЛИТИЧЕСКОЙ-ЛИТЕРАТУРНОЙ ГАЗЕТЫ.

Съ 1-го января 1878 года газета **„Донская Пчела"** издается по той же программѣ, какъ и предъидущихъ годахъ, два раза недѣлю: по **Четвергамъ** и **Воскресеньямъ**, по одному листу большаго формата въ 5-ти столбцахъ.

Направленіе газеты „Донской Пчелы" выяснилось достаточно въ теченіи двухлѣтняго своего существованія. Имѣя цѣль быть органомъ при-Азовскаго края, редакція принимаетъ всѣ завписящія отъ нея мѣры, чтобы въ газетѣ, вмѣстѣ съ новѣйшими политическими и другими свѣдѣніями, имѣли также мѣсто и вопросы, относящіяся до нуждъ и интересовъ мѣстнаго населенія.

ПОДПИСНАЯ ЦѢНА:

Съ доставкою въ Ростовѣ на Дону:		Съ пересылкою во всѣ гор. Рос. Имп:	
На годъ	6 р. —	На годъ	7 р. —
„ полгода	3 „ 50 к.	„ полгода	4 „ —
„ 3 мѣсяца	2 „ —	„ 3 мѣсяца	2 „ 50 к.

ЗА ПЕРЕМѢНУ АДРЕСА РЕДАКЦІЯ ВЗИМАЕТЪ 25 КОП.

Подписка принимается въ конторѣ редакціи „Донской Пчелы" въ Ростовѣ на-Дону на углу Таганрогской и Московской улицъ, въ домѣ бывшемъ Сидоровыхъ. Иногородніе благоволятъ адресоваться: въ редакцію газеты „Донской Пчелы" въ Рост. на-Дону.

Редакція покорнѣйше проситъ гг. иногороднихъ подписчиковъ присилать свои требованія заблоговременно, написавъ свои полные адресы четко и разборчиво.

1—5 Редакторъ-Издатель **И. А. Теръ-Абраміанъ.**

„КАВКАЗЪ"

ГАЗЕТА ПОЛИТИЧЕСКАЯ И ЛИТЕРАТУРНАЯ

ВЫХОДИТЪ ЕЖЕДНЕВНО КРОМѢ ДНЕЙ ПОСЛѢПРАЗДНИЧНЫХЪ

ПОДПИСКА НА ГАЗЕТУ

„КАВКАЗЪ" ЗА 1878 Г. ПРИНИМАЕТСЯ НА СЛѢДУЮЩИХЪ УСЛОВІЯХЪ.

СРОКИ	Съ дост. въ тиф.		Съ пересылкою иногород	
	Руб.	Коп.	Руб.	Коп.
На годъ	11	50	13	„
На полугода	6	„	7	„

ПОДПИСКА ПРИНИМАЕТСЯ:

Въ Тифлисѣ въ конторѣ редакціи, въ домѣ Хосроева, на Вельяминовской улицѣ Контора открыта ежедневно съ 9 ч. утра до 2 пополудни и съ 6 до 8 ч. вечера

3—3

ՅՈՒՆՎԱՐԻ 30. ՏԵՂԵԿԱՑՈՒՑ ԹԻՖԼԻՍ. 1878.

ԹԻՖԼԻՍԻ ՎԱՃԱՌԱՆՈՑ (Յունվարի 30-ին)

	Ր.	Կ.
Ոսկին (պոլումպերիալը)	8	5
Հին 82 պր. մ. արժ. 1000 մ.	1400	—
Հին 20 կ. 72 պր. 1000 »	1200	—
Վիգրիշնի 5% առաջի փոխառութեան տոմ. 100 »	233	—
Երկրորդ 5% վիգրիշնի »	235	—
Մարսելի կուրսը 265—	100	—
Լոնդոնի կուրսը Օդեսայի վրա.	9	48
	9	60
Վենայի կուրսը ածէ 121 գլ.	100	—
Դաւրեժի բարաթը. . .	5	—
Առևտրական բանկի ակցիան 200 մ. . . .	265	—
Փոթի Թիֆլիսեան երկաթուղու ակցիան 125 մ.	125	—
Շաքարը բրօցկու . .	9	10
» միւս տեսակը.	9	—
» շաքարաւազը.	8	20
» տրանզիտը. .	10	—
» մաքսը վճարած	16	—
Բամբակը Երևանու Ամերիկայի սերմից. . .	8	30
Միւս տեսակը հին սերմից.	8	—
Բուրդը թուշի . . .	7	50
» թարաքամի .	4	60
Ալիւր Շորագալու . .	2	—
» Երևանի. . . .	—	—
Գարին.	1	40
Մոմը քնաճարպի (стеар.)	14	50
Մեղաքս Նուխվայ. .	175	—
Կախեթուները. . . .	98	—
Կոկոնը Նուխվայ (բոժ.)	46	—
Ֆրիզոնը (լասը) Ագուլեաց	55	—
Կոֆէն մօկօի. . . .	30	—
» Լվանի . . .	—	—
» մարտինկօյինը	28	—

ՀԵՌԱԳԻՐ

	Ր.	Կ.
Կովկասի և Անդրկովկասի քաղաքները . . .	1	
Ռուսաստան .	2	
Աւստրիա . .	3	
Անգլիա. . . .	4	
Գերմանիա. . .	2	88
Ֆրանսիա . . .	3	75

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ՄԱՆԿԱԲԱՐՁԱԿԱՆ ԴՊՐՈՑ

(Վէրայի վրա № 38)

Ծնողկանների ընդունելութիւնը ցերեկվայ և գիշերվայ ամեն ժամանակ, օրը 50 կոպէկ վարձով, իսկ չքաւորներին անվարձ. Առանձին սենեակներում ամիսը 30 — 50 րուբլ. Կանանց իւանդութիւնների բաժանմունքի մէջ վարձը ընդհանուր սենեակում 18 րուբլ, իսկ մասնաւոր սենեակներում 30 րուբլ ամսական;

Երթևեկ հիւանդ կանանց և երեխաների ընդունելութիւնը ամեն օր, բացի կիրակի օրերից, 9½ մինչև 11 ժամ առաւօտեան. Բժշկապետ Անանով.

ՓՕԹԻ-ԹԻՖԼԻՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

Թիֆլիսից մինչև Փոթի (ճանապարհորդների գնացքը) 9 ժամին 21 րոպէ առաւօտեան։ Մինչև Միխայլովо (խառն գնացքը) երեկոյեան 5 ժամ. 18 րոպէ։

	առաւօտ.	երեկոյեան
Թիֆլիսից . .	9. 21	5. 18
Գօրի . . .	11. 58	9. 43
Միխայլովо.	1. 29	11. 57
Ռիոն . . .	6. 47	
Փոթի . . .	9. 40	

	առաւօտ.
Փոթիից . .	9. 13
Ռիոն . . .	12. 13
Միխայլովо. .	5. 39
Գօրի. . . .	7. 5
Թիֆլիս. . .	9. 31

Թիֆլիս գալիս է առաջին գընացքը երեկոյեան 9 ժ. 31 ր. երկրորդը՝ առաւօտեան 7 ժ. 56 ր.		

Տեղերի գինը՝ Թիֆլիսից

	I կլաս.	II կլ.	III կլ.
Մցխէթ .	90	68	38
Գօրի. . .	3. 20	2. 40	1. 33
Սուրամ.	5. 22	3. 92	2, 18
Ռիոն. . .	9.	6. 75	3. 75
Փոթի . .	13. 1	9, 75	5. 42

ՓՕՍՏ

Ամեն տեսակ թէ նամակներ, թէ լրագիրներ և թէ ծանր փոստ ամեն տեղ ուղարկելու, ընդունվում են ամեն օր, առաւօտեան 8 ժամից մինչև 1 և կէսօրից յետոյ 3 ժամից մինչև 7։ Իսկ կիրակի օրերը հասարակ նամակներ մինչև 10 ժամ առաւօտեան և 3—7 երեկոյեան։

Ռուսաստանից և Արտասահմանից փոստը ստացվում է Թիֆլիսում ամեն օր։ Բաղուի տրակտից՝ երեքշաբթի և շաբաթ օրերը։ Երևանի տրակտից՝ երկուշաբթի, հինգշաբթի և շաբաթ։ Փոթի-Թիֆլիսեան երկաթուղուց ամեն օր։ Նուխու տրակտից՝ չորեքշաբթի և կիրակի։ Բելիկլիչի տրակտից՝ երեքշաբթի և շաբաթ։

ՆԱՄԱԿՆԵՐ	Կոպ.
Բաց նամակը արժէ .	4
Ռուսաստան և Եւրոպայի բոլոր երկիրները նամակը արժէ	8
Ամերիկա	8
Պարսկաստան . . .	8
Հնդկաստան	70
Եգիպտոս	27

ԲԺՇԿԱՆՈՑ

Հիւանդների ընդունելութիւնը առաւօտ 9 ժամից մինչև 1 կէսօրից յետոյ։

Երկուշաբթի. Վէրմիշէվ և Գօրալեվիչ ներքին հիւանդութիւններ, քուչարեանց վիրաբուժական և ականջի հ. Սօկօլով երեխաների և ներքին հ.։

Երեքշաբթի. Վէրմիշէվ ներքին հ. Բէյլս աչքի հ. Ա. Բախուտով, կանանց, երեխաների հ. և մանկաբարձութեան, Բակստ սիֆիլիտական և կաշու հ.

Չորեքշաբթի. Վէրմիշէվ ներքին հ. Դուբէլիր կրծքային և երեխաների հ. Բակստ կրծքային և ջղային Սօկօլով վիրաբուժական հ.

Հինգշաբթի. Վէրմիշէվ ներքին հ. Կ. Բախուտով, կանանց և ջղային հ. Բակստ վենեբական և կաշու հ.

Ուրբաթ. Վէրմիշէվ ներքին հ. Բախուտով մանկաբարձութեան, կանանց և երեխաների հ. Քուչարեանց սիֆիլիտական և միզային գործարանների հ.

Շաբաթ. Վէրմիշէվ ներքին հ. Դուբէլիր երեխաների և կրծքային հ. Բէյլս աչքերի հ. Բակստ կրծքային և ջղային հ. Սօկօլով վիրաբուժական հ.

«ՄՇԱԿԻ» ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

—

—ՍՏԱՎՐՈՊՕԼ Գ. Ց. Ձեր նամակը տպվեցաւ լուրերի ձևով։

—ԳԱՆՁԱԿ Գ. Ք. Բ. կուղարկենք «Մշակ» երկու բաժանորդներին։

—ԴԵՐԲԵՆԴ. Գ. Ա. Կարելի է բաժանորդների փողերը յետոյ ուղարկել։

—ԵՐԵՒԱՆ. *** Ձեր նամակը տպեցինք։ Սպասում ենք նոր լուրերի։

—ՔՈՒԹԱՅԻՍ. Տ. Տ. Ս. Տասրուբլ հասցրինք ձեզ պ. Խ—ի ձեռքով։

—ԲԱԳՈՒ. Ն. Կ. «Մշակ» արդէն ձեզ ուղարկվում է առաջին համարից։

—ԲԱՅԻՆԴՈՒՐ. Ս. Տ. Մ. Ձեր ուղարկած լուրերը և նամակը կը տպենք հետևեալ համարներից մէկում։

Дозволено Цензурою 30 Января 1878 г. Тифлисъ. Типографія Мартиросіанца Խմբագիր-հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ